ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«16» 05 2023թ.
No 004198

**«ԲԱՇԿԻՐՍԿԱՅԱ ՍՈԴՈՎԱՅԱ ԿՈՄՊԱՆԻԱ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ**
**ՊԱՐՈՆ ԷԴՈՒԱՐԴ ՄԱԼԻՔԻ ԴԱՎԻԴՈՎԻՆ**
**(էլ. փոստի հասցե՝ bakieva.nv@soda.ru,**
**հասցե՝ ք. Երևան, Սեբաստիա փող., շենք 18ա, բն. 8)**

Հարգելի՛ պարոն Դավիդով,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի մայիսի 12-ի ««Արմենո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին» թիվ 207-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

*Առդիր՝ «7» թերթ:*

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

*Կատարող՝ Թերեզա Հակոբյան*
*Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն*
*Հեռ. (+374 60) 830-840 (252)*

**competition.am կայքում հրապարակման օրը՝ 27 հուլիսի 2023 թվական:**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2023 թվականի թիվ 207-Ա

## «ԱՐՄԵՆՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի մայիսի 12-ի նիստում, քննարկելով «Արմենո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Արմենո» ընկերություն**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

«Բաշկիրսկայա Սոդովայա Կոմպանիա» բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) 2023 թվականի ապրիլի 14-ին հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**) է ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ Հայաստանի Հանրապետության շուկայի վերլուծությունների համաձայն՝ վաճառքում առկա է «Արմենո» ընկերության կողմից փաթեթավորված սննդային սոդա (500գ): Փաթեթավորման վրա հասցեն բացակայում է, իսկ փաթեթի վրա տեղադրված նշումները նույնական են Ընկերությանը պատկանող «Сода пищевая» միջազգային ապրանքանշանին՝ գրանցման վկայական № 1242730 (վկայականի պատճենը կցվում է):

Ընկերությունը նշել է, որ, օրենսդրության համաձայն, ոչ ոք առանց իրավատիրոջ թույլտվության իրավունք չունի ապրանքների վրա օգտագործել իր ապրանքների անհատականացման համար գրանցված ապրանքային նշաններին նույնական նշումներ, եթե նման օգտագործման արդյունքում առաջանում է շփոթության հավանականություն:

Ընկերության կողմից № 1242730 միջազգային ապրանքային նշանը գրանցվել է 2015 թվականի փետրվարի 10-ին Հայաստանի և մի շարք այլ պետությունների տարածքում՝ մինչև 2025 թվականի փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածի համար:

Ընկերությունը նշել է նաև, որ անբարեխիղճ ձեռնարկատերերի կողմից Ընկերության ապրանքային նշանի պատճենումը հանգեցնում է սպառողների, ինչպես նաև ապրանքն արտադրողի վերաբերյալ մոլորեցման վտանգին:

Ըստ Ընկերության՝ ապրանքային նշանի պատճենման արդյունքում սպառողը հանգում է այն մտքին, որ տվյալ անհատականացման նշանով ապրանքը նախկինում իրեն հայտնի արտադրողի ապրանք է հանդիսանում (Ընկերությունը տասնյակ տարիներ իր արտադրանքը մատակարարում է Հայաստանի Հանրապետությանը): «Արմենո» ընկերության կողմից քաղաքացիական շրջանառության մեջ դրված նշումներով սննդային սոդայի փաթեթավորումը, նույնական է № 1242730 ապրանքային նշանին և համարվում է կոնտրաֆակտ:

Ընկերությունը նշել է, որ «Արմենո» ընկերության կողմից խախտվում են ոչ միայն ազգային, այլև միջազգային օրենսդրությունը, մասնավորապես՝ Արդյունաբերական Սեփականության Պաշտպանության Փարիզի Համաձայնագիրը (Հայաստանը Փարիզի Համաձայնագրի անդամ պետություն է հանդիսանում): Համաձայնագրի 9-րդ հոդվածի համաձայն՝ անօրինական ապրանքային նշանով ցանկացած արտադրանքի վրա արգելանք է դրվում այն երկրներում, որտեղ տվյալ նշանը օրինական պաշտպանության իրավունք ունի: 10-bis հոդվածով սահմանվում է՝

1. Միության երկրները (Փարիզի Համաձայնագրի անդամ պետությունները) պարտավոր են ապահովել Միության երկրների քաղաքացիների համար արդյունավետ պաշտպանություն անբարեխիղճ մրցակցությունից:

2. Անբարեխիղճ մրցակցության ակտ է համարվում մրցակցության ցանկացած ակտ, որը արդյունաբերական և առևտրային գործերում հակասում է ազնիվ սովորույթներին:

3. Մասնավորապես՝ արգելանքի են ենթակա՝

1) բոլոր գործողությունները, որոնք որևէ կերպ կարող են առաջացնել ձեռնարկության, արտադրանքի կամ մրցակցի արդյունաբերական, առևտրային գործունեության շփոթություն,

2) առևտրային գործունեության իրականացման ընթացքում կեղծ հաստատումներ, որոնք կարող են վարկաբեկել ձեռնարկությունը, արտադրանքը կամ մրցակցի արդյունաբերական, առևտրային գործունեությունը,

3) նշումները կամ հաստատումները, որոնց օգտագործումը առևտրային գործունեության իրականացման ժամանակ կարող է մոլորեցնել հանրությանը բնույթի, արտադրման եղանակի, հատկությունների, օգտագործման համար պիտանելիության կամ ապրանքների քանակի վերաբերյալ:

Համաձայնագրի 10-ter հոդվածի համաձայն՝ Միության երկրները պարտավորվում են Միության այլ երկրների քաղաքացիներին ապահովել օրինական միջոցներ՝ անբարեխիղճ գործողությունների արդյունավետ կանխարգելման համար:

Մտավոր սեփականության ոլորտում միջազգային օրենսդրության, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Ապրանքային նշանների մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքների հիման վրա՝ Ընկերությունը խնդրել է «Արմենո» ընկերության նկատմամբ հարուցել վարչական վարույթ, արգելել օգտագործել Ընկերության «Сода пищевая» ապրանքանշանը, պարտադրել ոչնչացնել կոնտրաֆակտային ապրանքը և «Արմենո» ընկերության նկատմամբ սահմանել վարչական տուգանք:

Հաղորդմանը կից Ընկերությունը ներկայացրել է իր կողմից արտադրված «Сода Пищевая» անվանումով սննդային սոդայի մեկ փաթեթվածք (այսուհետ նաև՝ **Ապրանք 1**): Ապրանք 1-ի փաթեթվածքը կազմված է ուղղահայաց ձգվող ուղղանկյունաձև կարմիր գրաֆիկական տարրից, որը պարունակում է օղակներ՝ սպիտակ և դեղին գույնի և նույն լայնությամբ կլորացված ուղղանկյունների տեսքով, գրաֆիկական տարրի կենտրոնական մասը պարունակում է սպիտակ կլորացված ուղղանկյուն, գրաֆիկական տարրի գրեթե կենտրոնական հատվածում (մի փոքր վերև) սպիտակ ֆոնի վրա առկա է շեղատառերով սև գույնի երկտող մակագրություն՝ կատարված կիրիլյան այբուբենով («Сода Пищевая»), որը տառադարձվում է որպես «Soda Pischevaya/Սոդա Պիշեվայա» (նշանակում է «սննդային սոդա»). բոլոր տառերն ունեն նույն սպիտակ եզրագիծը, որն ապահովում է ծավալ. ներքևում՝ ստորին մասում առկա է սև գույնի և կիրիլյան այբուբենով կատարված մակագրություն՝ «ГОСТ 32802-2014», իսկ փաթեթվածքի մյուս դարձերեսին առկա է նույն մակագրությունը՝ հայերենով: Փաթեթվածքի ստորին հատվածում առկա է Ապրանք 1-ի և այն արտադրողի վերաբերյալ այլ նշումներ՝ հետևյալ հերթականությամբ. «ЛАУРЕАТ ЛУЧШИХ 2020 СТО РОССИИ ТОВАРОВ», «ЗОЛОТОЙ ЗНАК, ЗНАК, КАЧЕСТВА XXI ВЕКА», «ПРОДУКТ БАШКОРТОСТАНА», «ЛУЧШИЕ ТОВАРЫ БАШКОРТОСТАНА 2020 ЛАУРЕАТ»:

Ապրանք 1-ի փաթեթվածքի կողային հատվածներից մեկում առկա են նշումներ՝ սննդային սոդայի, կիրառելիության, քաշի (500գ), արտադրության ամսաթվի, պիտանիության ժամկետի, պահելու և պահպանման պայմանների, արտադրողի («Բաշկիրսկայա սոդովայա կոմպանիա» ԲԸ, 453110, Ռուսաստան, Բաշկորտոստանի Հանրապետություն, ք. Ստերլիտամակ, Տեխնիչեսկայա փող., տուն 32) մասին տեղեկատվություն, ինչպես նաև հեռախոսահամար՝ +7(3473)297-396, 297-671 և ներմուծողի մասին տվյալներ (ԱՁ Հ. Խաչատրյան): Փաթեթվածքի մյուս կողային հատվածում առկա են վերոնշյալ նշումները՝ ռուսերենով, ինչպես նաև ստորին հատվածում նշված է, որ այն համապատասխանում է «ԳՕՍՏ Ռ ԻՍՕ 22000»-ի պահանջներին:

Ընկերությունը ներկայացրել է նաև «Արմենո» ընկերության կողմից փաթեթավորված, «Сода Пищевая» անվանումով սննդային սոդայի մեկ փաթեթվածք (այսուհետ նաև՝ **Ապրանք 2**)՝ գնված 2021 թվականի մայիսի 6-ին (կտրոնը ներկայացվել է), որը ևս կազմված է ուղղահայաց ձգվող ուղղանկյունաձև կարմիր գրաֆիկական տարրից, որն էլ պարունակում է օղակներ՝ սպիտակ և դեղին գույնի և նույն լայնությամբ կլորացված ուղղանկյունների տեսքով, գրաֆիկական տարրի կենտրոնական մասը պարունակում է սպիտակ կլորացված ուղղանկյուն: Գրեթե կենտրոնական հատվածում (մի փոքր վերև) սպիտակ ֆոնի վրա մեծատառերով և շեղատառերով առկա է սև գույնի երկտող մակագրություն՝ կատարված կիրիլյան այբուբենով, որը տառադարձվում է որպես «Soda Pischevaya/Սոդա Պիշեվայա» (նշանակում է «սննդային սոդա»). բոլոր տառերն ունեն նույն սպիտակ եզրագիծը, որն ապահովում է ծավալ: Փաթեթվածքի ներքևում՝ ստորին մասում առկա է սև գույնով և կիրիլյան այբուբենով մակագրություն՝ «ГОСТ 32802-2014»: Փաթեթվածքի մյուս կողմում առկա է նաև Ապրանք 2-ի և այն արտադրողի վերաբերյալ այլ նշումներ՝ հետևյալ հերթականությամբ. «ЛУЧШИХ СТО РОССИИ ТОВАРОВ ДИПЛОМАНТ», «ЗОЛОТОЙ ЗНАК, ЗНАК, КАЧЕСТВА XXI ВЕКА», «ПРОДУКТ БАШКОРТОСТАНА», «ГОСТ 32802-2014» նշումներ:

Ապրանք 2-ի փաթեթվածքի կողային հատվածում նշված է արտադրողի (АО "Башкирская содовая компания") վերաբերյալ տեղեկատվություն, հեռախոսահամար ((3473) 297-396; 297-671), Ապրանք 2-ի, դրա օգտագործման, պահելու և պահպանելու պայմանների ու փաթեթավորողի մասին տվյալներ («ԱՐՄԵՆՈ» ՍՊԸ), կողային մյուս հատվածում նշված է Ապրանք 2-ի, կիրառելիության, քաշի (500գ) և պահպանելու վերաբերյալ այլ նշումներ:

Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության կողմից 2023 թվականի մայիսի 4-ին ք. Երևան, Մեսրոպ Մաշտոցի պող., 18 հասցեում գործող «ՍԱՍ», ք. Երևան, Ամիրյան 15 հասցեում գործող «Նոր Զովք», ք. Երևան, Տիգրան Մեծ 10 հասցեում գործող «Սիթի» և ք. Երևան, Ռոսիա Մոլ, Տիգրան Մեծ 16 հասցեում գործող «Քարֆուր» առևտրի օբյեկտներում իրականացված շրջայցերի արդյունքում «Արմենո» ընկերության կողմից փաթեթավորված սննդային սոդա վաճառքում չի հայտնաբերվել:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող կամ այլ կերպ շրջանառության մեջ դրված ապրանքների, դրանց փաթեթավորումների կամ պիտակների վրա կամ ապրանքին առնչվող այլ տեղեկատվության մեջ կամ ինտերնետային դոմենի անվանումներում կամ գովազդում այնպիսի անվանման, նշանի, նիշի, ինչյունի կամ բառի օգտագործումը, որը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է այլ տնտեսավարող սուբյեկտի՝ Հայաստանի Հանրապետությունում պահպանվող կամ նրա կողմից ավելի վաղ օգտագործվող կամ հանրահայտ ապրանքային կամ սպասարկման նշանին կամ ֆիրմային անվանմանը:

Վերոգրյալ նորմերից բխում է, որ օրենսդիրը ցանկացած պարագայում անբարեխիղճ մրցակցության առաջացման պայման է սահմանել տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ շփոթության առաջացումը կամ դրա հնարավորությունը, որը, ի թիվս այլնի, դրսևորվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող կամ այլ կերպ շրջանառության մեջ դրված ապրանքների, դրանց փաթեթավորումների կամ պիտակների վրա կամ ապրանքին առնչվող այլ տեղեկատվության մեջ կամ ինտերնետային դոմենի անվանումներում կամ գովազդում այնպիսի անվանման, նշանի, նիշի, ինչյունի կամ բառի օգտագործմամբ, որը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է այլ տնտեսավարող սուբյեկտի՝ Հայաստանի Հանրապետությունում պահպանվող կամ նրա կողմից ավելի վաղ օգտագործվող կամ հանրահայտ ապրանքային կամ սպասարկման նշանին կամ ֆիրմային անվանմանը:

Միաժամանակ, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ «Արմենո» ընկերության վարքագիծը չի կարող առաջացնել Օրենքի իմաստով անբարեխիղճ մրցակցություն՝ շփոթության առաջացում, քանի դեռ դրա արդյունքում չի խաթարվում տնտեսական մրցակցությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ իրականացված շրջայցերի արդյունքում «Արմենո» ընկերության կողմից փաթեթավորված սննդային սոդա վաճառքում չի հայտնաբերվել: Բացի այդ, «Արմենո» ընկերության 2022 թվականի հասույթի չափը կազմել է ՀՀ դրամ:

Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը ենթակա է մերժման, եթե առկա է պատասխանատվությունից ազատելու հիմք:

Օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը կարող է անձին ազատել պատասխանատվությունից, եթե նրա վարքագիծը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ որևէ անձի կամ պետությանն էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել:

Վերոնշյալ դրույթների բովանդակությունից բխում է, որ Հանձնաժողովը վարույթի հարուցումը մերժում է, իսկ հարուցված վարույթի պայմաններում կարող է տնտեսավարող սուբյեկտին կատարած իրավախախտման համար ազատել պատասխանատվությունից այն դեպքերում, երբ կատարված արարքը իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում:

Անձի կատարած արարքը նվազ կարևորություն ունեցող կհամարվի, եթե անձի կատարած արարքով որևէ անձի կամ պետությանը.

1. էական վնաս չի պատճառվել,
2. էական վնաս չէր կարող պատճառվել:

Նշյալի համատեքստում Հանձնաժողովը նախևառաջ հարկ է համարում արձանագրել, որ Օրենքով նախատեսված ցանկացած իրավախախտման դեպքում գործում է որևէ անձի կամ պետությանը էական վնաս պատճառելու հավանականության կանխավարկածը, քանի որ հենց այդ հիմքով է օրենսդիրը արարքը համարում իրավախախտում:

Ըստ այդմ, անձի կատարած արարքի նվազ կարևորություն ունենալու հարցը Հանձնաժողովի կողմից ենթակա է քննարկման այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտը բարձրացնում է իր կողմից դրսևորած վարքագծի էական վնաս պատճառած չլինելու հարցը, և երբ հիմնավորվում է իր այդ արարքով որևէ անձի կամ պետությանը էական վնաս պատճառած չլինելու հանգամանքը, կամ երբ Հանձնաժողովն է հայտնաբերում այդպիսի հիմքեր: Ընդ որում, վնասի էական լինելը կամ չլինելը որոշվում է՝ ի թիվս այլնի հաշվի առնելով անձի դրսևորած վարքագիծը, դրա դրդապատճառները, շարժառիթներն ու հետևանքները, և այդ կապակցությամբ Հանձնաժողովի գնահատականը կիրառելի է բացառապես կոնկրետ գործի շրջանակում:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ «Արմենո» ընկերության վարքագիծը նույնիսկ իրավախախտման հատկանիշների առերևույթ առկայության պարագայում նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, քանի որ «Արմենո» ընկերության 2022 թվականի հասույթի չափը կազմել է ընդամենը ՀՀ դրամ:

Նման պայմաններում Հանձնաժողովն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության պարզմանը:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն որոշմամբ Հանձնաժողովի դիրքորոշումներն արտահայտված են բացառապես մրցակցային իրավունքի լույսի ներքո, ինչը չի սահմանափակում Ընկերության՝ իր իրավունքների (շահերի) պաշտպանության խնդրանքով պետական իրավասու այլ մարմիններին դիմելու հնարավորությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 80-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 3-րդ մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մերժել «Արմենո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Բաշկիրսկայա Սոդովայա Կոմպանիա» բաժնետիրական ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական և դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2023 թ. մայիսի 12
Երևան